2017թ Հունվարի 23-ին, ժամը 14:-ին կայացած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ընդհանուր ժողովի

**Օրակարգ**

Արգավանդ համայնքի ղեկավարի 2016թ. տարեկան հաշվետվության ներկայացում:

/զեկուցող՝ Ա.Աղաջանյան/

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի վարչության երիտասարդության բաժնի պետ Արմեն Թովմասյանը, համայնքապետարանի աշխատակազմը, ավագանիները, դպրոցի տնօրենը, բուժ. կետի աշխատակիցները, համայնքի բնակիչները:

Լսեցին - համայնքի ղեկավարի հաշվետվությունը:

Համայնքի բնակիչները դժգոհեցին ոռոգման ցանցի վատ վիճակից և մանկապարտեզի շենքի անմխիթար պայմաններից:
Համայնքի ղեկավարը նշեց, որ այդ հիմնահարցերը լուծելու համար անհրաժեշտ են ներդրումներ:
Հարցերի փոխանակումից հետո ժողովն ավարտվեց:

Համայնքի ղեկավար Ա.Աղաջանյան

Արձանագրող Ա.Սարգսյան

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Արգավանդ համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և հյուրեր: Գործող Կարգի և տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ըստ բնագավառների համայնքապետարանի, համայնքի ղեկավարի և ավագանու 2016 թ. գործունեությունը:

2016 թվականի ընթացքում համայնքի ղեկավարը հրավիրել և վարել է ավագանու 8 նիստ: Նիստերի ընթացքում լսվել են տարբեր հարցեր և ընդունվել է ավագանու համապատասխան որոշումներ: Ավագանու որոշումները յոթ օրյա ժամկետում ուղարկվել է մարզպետարան:

Սահմանվել է 2016 թվականի գումարվելիք ավագանու նիստերի ժամանակացույցը: Ընդունվել են համայնքի ղեկավարի 93 որոշումներ և արձակվել են 20 կարգադրություններ: Այժմ մեր գործունեությունը ներկայացնեմ ըստ բնագավառների

1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների պաշտպանության բնագավառում

Համայնքի ղեկավարը իր իրավասությունների շրջանակներում պաշտպանել է համայնքի բնակիչների շահերը, կազմակերպվել է համայնքի բնակչության հաշվառում այն է

մշտական բնակչություն 2468 մարդ որից

| | |
|---|---|
| 1. թոշակառու | 280 |
| 2. նպաստառու ընտանիքներ | 37 |
| 3. հաշմանդամ | 3 |
| 4. միակողմանի ծնողազուրկ | 5 ընտանիք |
| 5. բազմազավակ | 14 ընտանիք |

Կատարվել են 120 /մեկ հարյուր քսան/ քաղաքացիների ընդունելություններ, ընթացք է տրվել նրանց առաջարկությունները քննարկվել են քաղաքացիների կողմից, ներկայացված 40 դիմում բողոքները և ձեռնարկվել համապատասխան միջոցներ: Բնակչությանը տրամադրվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և 304 տեղեկանք:

2. Ֆինանսների բնագավառում իրականացվել է

Հաստատվել է 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները: Կազմակերպվել է հողի հարկի, գույքահարկի և

Ժամանակին են ներկայացել տարածքային զարգացման, պլանը անձնական գործերը կազմվել և ժամանակին ներկայացվել է զինկոմիսարիատ:

5.Քաղաքաշինության բնագավառում

Համայնքի որոշ քաղաքացիների տրվել է շինարարական թույլտվություն. խափանվել է ապօրինի շինարարությունը: Կատարվել են փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ: Ժամանակին կատարվել է աղբահանություն, մեծ ուշադրություն է դարձվել համայնքի սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

6.Հողօգտագործման բնագավառում

Կատարել ենք համայնքի վարչական տարածքի հողերի հաշվառումը և կազմել հողային հաշվեկշիռ այն է

Համայնքի վարչական տարածքը – 1619,40 հա

որից

| | |
|---|---|
| 1.Վարելահողեր | 870.24 հա |
| 2.Տնամերձ հողեր | 207,97 հա |
| 3.Պետական սեփականության հողեր | 10,38 հա |
| 4.Աճուրդային կարգով օտարված հողեր | 150,0 հա |
| 5.Ջրային տարածքներ | 131,97 հա |

7. Առևտրի և կենցաղային բնագավառում

Առևտրի օբյեկտներին տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն և սահմանվել է յուրաքանչյուր եռամսյակի համար տասը հազար դրամ տեղական տուրք և հաստատվել է ավագանու կողմից. Տեղական տուրքերի և վճարների գանձվել է 100%-ով:

8. Տրանսպորտի բնագավառում

Համայնքում կազմակերպվում են համայնքի փողոցների բարեկարգման աշխատանքներ, քանդված հատվածները, փոսերը լցվում են հողով և ավազով. կատարել ենք կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության աշխատանքներ:

9. Կրթության և մշակույթի բնագավառում

Աջակցում ենք հանրակրթական դպրոցի գործունեությանը: «Վերջին զանգ միջոցառման ժամանակ դպրոցի շրջանավարտներին տրվել են նվերներ և շնորհակալագրեր»: Դպրոցում սովորում են 264 /երկու հարյուր վաթսունչորս/ աշակերտներ, ապահովված է բարձրակարգ մասնագետներով: Դպրոցում գործում է պարի խումբ, որտեղ հաճախում են երեխաները: Համայնքի մշակույթի տանը գործում է գրադարան, որից օգտվում են 338 /երեք հարյուր երեսունութ/ ընթերցասեր բնակիչներ: Մեծ աշխատանքներ են տարվում երիտասարդների դերի բարձրացման ուղղությամբ:

10. Առողջապահության և սպորտի բնագավառում

Աջակցում ենք համայնքի բուժամբուլատորիայի, սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային միջոցառումների կատարման գործընթացին, որոնք ընթանում են պլանավորված ժամանակահատվածում և անթերի կերպով:

Համայնքի հանրակրթական դպրոցում կա անհրաժեշտ պարագաներով հագեցած սպորտդահլիճ, որտեղ ցանկացողները զբաղվում են սպորտով:

11. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում

Թվով 82 /ութսուներկու/ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն սոցիալական աջակցության տեսքով 37 /երեսունյոթ/ ընտանիքներ ներգրավվել են «Ընտանեկան նպաստ» ծրագրում: Աջակցում ենք երիտասարդ մասնագետների աշխատանքի ընդունմանը:

12. Գյուղատնտեսության բնագավառում իրականացվել են հետևյալ աշխա-

հիվանդությունների և ժամանակակից բուժման [illegible]

յուրաքանչյուրին կապված հարցերը շատերին տրվել են խորհուրդներ և ցուցումներ:

Մարզպետարանի միջնորդությամբ ձեռք ենք բերել անհրաժեշտ քանակությամբ պատվաստանյութեր և բաշխել նախապես ցուցակագրված հողատերերին-

1.ազոտական պատվաստանյութ 1 պարկը 6000 /վեց հազար/ 22 դրամ

2.կալիումական պատվաստանյութ 1 պարկը 7000 /յոթ հազար/ 22 դրամ

3.ֆոսֆորական պատվաստանյութ 1 պարկը 7000 /յոթ հազար/ 22 դրամ

Կատարվել են գյուղ. կենդանիների հաշվառում, համայնքում առկա են

| | |
|---|---|
| խոշոր եղջերավոր կենդանիներ | 1235 գլուխ |
| որից կովեր | 330 գլուխ |
| խոզեր | 170 գլուխ |
| ոչխարներ | 92 գլուխ |
| թռչուններ | 5710 թև |

Պարբերաբար հսկվում է համայնքի անասնաբույժի աշխատանքը, որպեսզի գյուղ. կենդանիների բուժ. պրոֆիլակտիկ և հակահամաճարակային միջոցառումները կատարվեն ժամանակին և անթերի կերպով:

Համայնքում առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ. համայնքի բյուջեի միջոցները բավարար չեն մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները կատարելու համար: Մշակույթի տան տանիքը վատ վիճակում է, որը ունի վերանորոգման կարիք:

Համայնքի ոռոգման ցանցը ամբողջովին քայքայված է, կիսախողովակները անհրաժեշտ է փոխել:

Համայնքի ղեկավար Ս. Աղաջանյան